

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES

ԿԱՐԾԻՔ ԹԻՎ 2 (2001)

Ներկայացնելով ԷՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ՝

ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 6-ՐԻ ՀՈՂՎԱԾԸ

OPINION No 2 (2001)
OF THE CONSULTATIVE COUNCIL OF EUROPEAN JUDGES (CCJE)
FOR THE ATTENTION OF THE COMMITTEE OF MINISTERS
OF THE COUNCIL OF EUROPE ON THE FUNDING AND MANAGEMENT
OF COURTS WITH REFERENCE TO THE EFFICIENCY OF THE JUDICIARY
AND TO ARTICLE 6 OF THE EUROPEAN CONVENTION ON HUMAN
RIGHTS



«Աջակցություն Հայաստանում դատական բարեփոխումների իրականացմանը»

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽՏ) փաստաթղթերի ոչ պաշտոնական թարգմանության տպագրությունն իրականացվել է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի կողմից համաֆինանսավորվող ծրագրի մի մասի շրջանակներում: Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽՏ) փաստաթղթերում ներկայացված տեսակետները որևէ պարագայում չեն կարող համադրվել Եվրոպական միության պատժական տեսակետի արտահայտում:

“Support to the implementation of the judicial reform in Armenia”

The publication of the non-official translation of the documents of the Consultative Council of European Judges (CCJE) has been produced as part of a project co-funded by the European Union and the Council of Europe. The views expressed in the documents of CCJE can in no way be taken to reflect the official opinion of the European Union.

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽՏ) Կարծիք ԹԻՎ 2 (2001)

Բոլոր իրավունքները պահպանված են: Առանց Հաղորդակցության սնօրինության (F-67075 Ստրասբուրգ, Սեդեֆու կամ publishing@coe.int) նախնական բույլովության ուսյն հրատարակության որևէ հատված չի կարող թարգմանվել, վերարտադրվել կամ փոխանցվել որևէ ձևով կամ միջոցներով՝ էլեկտրոնային (սկսվածակ, համացանց և այլն) կամ մեխանիկական, այդ թվում՝ պատենտահամար, ձայնագրմամբ կամ տեղեկատվության պահեստավորման կամ սրունան ցանկացած համակարգով:

Էջայրումը և դիզայնը՝ «Անդրանիկ» հրատարակչության

Հրատարակվել է Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի կողմից

Երևան, Հայաստանի Հանրապետություն
www.coe.int/yerevan

- © Եվրոպայի խորհուրդ, 2001թ., անգլերեն լուրագրություն՝ Opinion No 2 (2001) of the Consultative Council of European Judges (CCJE)
- © Եվրոպայի խորհուրդ, 2018թ., հայերեն ոչ պատժական թարգմանություն

Opinion No 2 (2001) of the Consultative Council of European Judges (CCJE)

All rights reserved. No part of this publication may be translated, reproduced or transmitted, in any form or by any means, electronic (CD-Rom, Internet, etc.) or mechanical, including photocopying, recording or any information storage or retrieval system, without prior permission in writing from the Directorate of Communications (F-67075 Strasbourg Cedex or publishing@coe.int).

Layout and design: “Andranik” Publishing House

Published by the Council of Europe Office in Yerevan

Yerevan, Republic of Armenia
www.coe.int/yerevan

- © Council of Europe 2001 English edition: Opinion No 2 (2001) of the Consultative Council of European Judges (CCJE)
- © Council of Europe 2018 Armenian non-official translation



Ստորագրուրդ, 2001 թվականի նոյեմբերի 23

ԵՊԽԽ (2001) Կարծիք թիվ 2

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
(ԵՊԽԽ)

ԿԱՐՇԻՔ ԹԻՎ 2 (2001)

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ԷՋԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ՝
ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ

1. Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը (ԵԴԽՆ) կազմել է իր Կարծիքը պետություններին ուղղված հարցաժամի պատասխաններին, սույն հարցի առնչությամբ ԵԴԽՆ աշխատանքային խմբի կողմից կազմված տեխստերի և ԵԴԽՆ նախագահի ու փոխնախագահի, ինչպես նաև ԵԴԽՆ փորձագետ պարոն Զասեկ Չլեբնի (Վեհաստան) կողմից կազմված տեխստերի հիման վրա:

2. ԵԴԽՆ-ն գտնում է, որ դատարանների ֆինանսավորումը սերտորեն առնչվում է դատավորների անկախության հարցին, քանի որ դրանով են սահմանվում այն պայմանները, որոնց պարագայում դատարաններն իրականացնում են իրենց գործառնությունները:

3. Ավելի ուժեղացնելու ակնհայտ կապ կա մի կողմից՝ դատարանների ֆինանսավորման և կառավարման և մյուս կողմից՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի սկզբունքների միջև. արդարադատության մասշտաբային և արդար դատաբանության իրավունքը պատշաճ չեն կարող երաշխավորվել, եթե գործը հնարավոր չէ քննել ողջամիտ ժամկետում մի դատարանի կողմից, որն արդյունավետ գործելու համար չունի համապատասխան միջոցներ և ռեսուրսներ:

4. Դատարանների ֆինանսավորման և կառավարման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի բոլոր ընդհանուր սկզբունքները և չափանիշները անդամ պետություններին պարտավորեցնում են այնպիսի ֆինանսական ռեսուրսներ արամադրել, որոնք կբավարարեն տարբեր դատական համակարգերի կարիքները:

5. ԵԴԽՆ-ն համաձայն է, որ չնայած դատարանների ֆինանսավորումը պետական բյուջեի մաս է կազմում, որը ներկայացվում է խորհրդարանին ֆինանսների նախարարության կողմից, այնուամենայնիվ, քաղաքական կյանքում առկա փոփոխությունները չպետք է ազդեն նման ֆինանսավորման վրա: Չնայած ֆինանսավորման այն չափը, որը երկիրը կարող է իրեն թույլ տալ դատարանների համար, ըստ էության, քաղաքական որոշում է, այնուամենայնիվ, բավականին զգուշացնող է պետք է դրսևորել մի համակարգում, որը հենվում է իշխանության տարանջատման սկզբունքի վրա՝ ապահովելու համար, որ ո՛չ գործադիր և ո՛չ օրենսդիր մարմինները չկարողանան դատական համակարգի բյուջեն կազմելիս ճշգրտումներ գործադրել դատական իշխանության վրա: Դատարաններին ֆինանսական միջոցներ հատկացնելու մասին որոշումները պետք է կայացվեն՝ խստագույնս պահպանելով դատական անկախությունը:

6. Մեծ թվով երկրներում արդարադատության նախարարությունը, իր հերթին, ներգրավվում է դատարանների բյուջեները ֆինանսների և նախարարությանը ներկայացնելու նախարարության հետ բանակցելու գործում: Շատ երկրներում դատարաններն արդարադատության նա-

խորարարյանը ուղղակիորեն կամ անուղղակիորեն առաջարկներ են ներկայացնում: Այնուամենայնիվ, որոշ դեպքերում, դատարանները բյուջեի առաջարկներ անմիջականորեն ներկայացնում են ֆինանսների նախարարյանը: Այդպիսի օրինակներ են Հստոնիայի և Սլովակիայի գերագույն դատարանները, որոնք իրենց սեփական բյուջեն են ներկայացնում, և Կիպրոսի ու Սլովենիայի գերագույն դատարանները, որոնք բյուջե ներկայացնում են բոլոր ատյանների դատարանների համար: Շվեյցարիայում Դաշնային գերագույն դատարանը իր սեփական բյուջեն Դաշնային խորհրդարանին ներկայացնելու իրավունք ունի (որը պետք է հաստատվի երեք դատավորի կազմով Վարչական հանձնաժողովի կողմից), իսկ դատարանի նախագահը և գլխավոր ֆարսուղարը իրավունք ունեն ելույթ ունենալու խորհրդարանում՝ բյուջեն հիմնավորելու համար: Լիտվայում 1999 թվականի դեկտեմբերի 21-ի որոշմամբ Սահմանադրական դատարանը սահմանեց սկզբունք, որի համաձայն յուրաքանչյուր դատարան իր սեփական բյուջեն ունենալու իրավունք ունի, որը խորհրդարանի կողմից հաստատվող պետական բյուջեում ներկայացվում է առանձին տողով: Ռուսաստանում դաշնային բյուջեում առանձին տող պետք է լինի Սահմանադրական դատարանի, Գերագույն դատարանի և ընդհանուր իրավասության այլ դատարանների, Դաշնային արբիտրաժային դատարանի, արբիտրաժային այլ տրիբունալների համար, իսկ Ռուսաստանի դատավորների խորհուրդին ունի ոչ միայն դաշնային բյուջեի ֆինանսումներին մասնակցելու իրավունք, այլև իրավունք ունի ներկայացված լինելու Ռուսաստանի Դաշնային ժողովի համապատասխան պալատների ֆինանսումներում: Հյուսիսեվրոպական պետություններում վերջերս ընդունված օրենսդրությամբ ֆորմալացվել է դատարանների բյուջեների համակարգման և բյուջեները արդարադատության նախարարյանը ներկայացնելու ընթացակարգը: Դանիայում այս գործառնությամբ կատարում է դատական դեպարտամենտը (որի ղեկավար կոմիտեի կազմում անդամների մեծամասնությունը տարբեր դատարանների ներկայացուցիչներ են): Շվեդիայում նման գործառնությամբ իրականացնում է Ազգային դատարանների դեպարտամենտը (հատուկ կառավարական մարմին, որի ղեկավար կոմիտեի անդամների փոխամասնությունը դատավորներ են), որի պարտավորությունների մեջ մտնում է եռամյա փոխանցելի բյուջե կազմելը:

7. Ի տարբերություն վերոնշյալի՝ այլ երկրներում դատական իշխանությունը ներգրավված չէ արդարադատության նախարարյան հետ բյուջեի բանակցություններում կամ դատական ծախսերը ֆինանսավորելու համար նմանաիպ այլ գործընթացներում, իսկ ցանկացած ազդեցություն ունի ոչ ֆորմալ բնույթ: Բելգիան, Խորվաթիան, Ֆրանսիան,

Գերմանիան, Իտալիան (բացառությամբ որոշ հատկացումների), Լյուքսեմբուրգը, Մալթան, Ուկրաինան և Միացյալ Թագավորությունը այդ կատեգորիայի իրավական համակարգերի օրինակներ են:

8. Թե որքանով է դատական համակարգը համարվում պատշաճ ֆինանսավորված՝ ոչ միշտ է, որ պայմանավորված է դատական համակարգի մարմինների կողմից ներկայացվող առաջարկների կամ նման մարմինների հետ խորհրդակցությունների ֆորմալ ընթացակարգերի առկայությամբ, չնայած դատական իշխանության ներկայացուցիչների ուղղակի ներգրավումը, ամեն դեպքում, կարևոր անհրաժեշտություն է: Հարցառարի պատասխաններում հաճախ նշվում են մեծ թվով քերականներ, որոնք, մասնավորապես, տատանվում են համապատասխան ռեսուրսների անբավարարությունից (տարածք, կառույց, գրասենյակային և համակարգչային սարքավորումներ և այլն) մինչև դատավորների համար անհրաժեշտ օժանդակության լիակատար բացակայությունը (բարձր որակավորում ունեցող աշխատակազմ, մասնագետ-օգնականներ, թվայնացված փաստաթղթերին հասանելիություն և այլն): Արևելյան Եվրոպայի երկրներում հատկապես բյուջետային սահմանափակումները ստիպել են խորհրդարաններին կրճատել դատարանների ֆինանսական հատկացումները՝ հասցնելով պահանջվողից հարաբերականորեն ցածր չափի (օրինակ՝ Ռուսաստանում՝ 50%): Նույնիսկ Արևմտյան Եվրոպայի երկրներում բյուջետային սահմանափակումների հետևանքով սահմանափակվել է դատարանի գահլինների, գրասենյակային, ՏՏ և/կամ աշխատակազմի թիվը (վերջին կետը նշանակում է, որ դատավորները գերծ չեն մնում երբեմն ոչ դատական աշխատանքներ կատարելուց):

9. Խնդիր կարող է առաջանալ, որ դատական իշխանությունը, որը հաճախ չի դիտարկվում որպես պետական իշխանության հատուկ նյութ, ունի առանձնահատուկ կարիքներ՝ իր գործառույթներն իրականացնելու և անկախությունը պահպանելու համար: Դժբախտաբար, սոստեսական ապակյունները կարող են գերակա համարվել դատական համակարգում կարևոր կառուցվածքային փոփոխություններ կատարելու և դրա արդյունավետությունը բարձրացնելու բննարկումներում: Չնայած ոչ մի երկիր չի կարող անտեսել իր ֆինանսական հնարավորությունները՝ որոշելու, թե ծառայությունների ինչ մակարդակ կարող է ապահովել, այնուամենայնիվ, դատական իշխանությունը և դատարանները, որպես պետության առանցքային հենք, ռեսուրսներ պահանջելու ուժեղ հիմք ունեն:

10. Թեև ԵԴԽՆ-ն չի կարող անտեսել երկրների տնտեսական տարբերությունները, այնուամենայնիվ գտնում է, որ բյուջեն կազմելու գործընթացի ժամանակ դատարանների համապատասխան ֆինան-

սավորման հարցում անհրաժեշտ է ապահովել դատարանների առավել մեծ ներգրավվածություն: ԵՊԽՆ-ն գտնում է, որ, հետևաբար, կարևոր է, որ խորհրդարանի կողմից դատական համակարգի բյուջեն ընդունելու միջոցառումներում պարտադիր ապահովվի ընթացակարգ, որի դեպքում հաշվի կառնվեն դատական մարմինների դիրքորոշումները:

11. Բյուջեի ձևավորման հարցում դատարանների ակտիվ ներգրավվածություն ապահովելու տարբերակ կարող են լինել դատական իշխանության կառավարման համար պատասխանատու անկախ մարմին (այն երկրներում, որտեղ նման մարմին կա) դատարանների ֆինանսավորման պահանջներ կազմելու համակարգողի գործառույթ վերապահելը և այդ մարմինը դատարանների կարիքները գնահատելու հարցում խորհրդարանի հետ անմիջական կոնտակտային կենտրոնը դարձնելը: Ցանկալի է, որ բոլոր դատարաններին ներկայացնող մարմինը պատասխանատու լինի բյուջեի վերաբերյալ առաջարկները ներկայացնելու խորհրդարանին կամ խորհրդարանի հատուկ հանձնաժողովներից որևէ մեկին:

12. Դատարաններին հատկացված բյուջեի կառավարումը չափազանց մեծ պատասխանատվություն է, որը պահանջում է մասնագիտական ուշադրություն: ԵՊԽՆ-ի ֆնանսիումները ցույց են տվել, որ մեծ տարբերություն կա մի կողմից՝ այն համակարգերի միջև, որտեղ կառավարումը իրականացվում է դատական մարմնի կամ դատական իշխանության պատասխանատու անձանց կամ մարմնի կողմից, կամ նման մարմնին պատասխանատու համապատասխան վարչական օժանդակություն ստացող անկախ մարմնի կողմից, և մյուս կողմից՝ այն համակարգերի, որտեղ կառավարումն իրականացվում է բացառապես կառավարության որևէ վարչության կամ ծառայության կողմից: Առաջին մոտեցումը որդեգրվել է մի շարք նոր ժողովրդավարական երկրներում, ինչպես նաև այլ երկրներում՝ հաշվի առնելով դատական իշխանության անկախության ապահովման և դատական համակարգի կողմից իր գործառույթներն իրականացնելու հարցում դրա առավելությունները:

13. Եթե դատարանների կառավարումը վերապահվի դատավորներին, ապա նրանք պետք է անցնեն համապատասխան վերապատրաստում և այս գործառույթը իրականացնելու համար ստանան անհրաժեշտ աջակցություն: Ցանկացած դեպքում կարևոր է, որ դատավորները պատասխանատու լինելու վարչական բոլոր որոշումների համար, որոնք անմիջականորեն ազդում են դատարանների գործառույթների կատարման վրա:

¹ Տե՛ս դատավորների անկախության, արդյունավետության և դերի մասին թիվ 1 (2201) կարծիքը «Նշանակող և խորհրդակցական մարմիններ» վերնագրի տակ:

Եզրակացություն

14. ԵՊԽՆ-ն գտնում է, որ պետությունները պետք է վերանայեն դատարանների ֆինանսավորման և կառավարման կարգավորումները՝ հաշվի առնելով սույն Կարծիքը: ԵՊԽՆ-ն նաև ուշադրություն է հրավիրում այն փաստին, որ անհրաժեշտ է դատարաններին հատկացնել բավարար ռեսուրսներ, որպեսզի վերջիններս ի գործ լինեն իրականացնելու իրենց գործառույթը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում սահմանված չափորոշիչներին համապատասխան:

Եվրոպայի խորհուրդն առաջատարն է աշխարհամասում մարդու իրավունքներով զբաղվող կազմակերպությունների շարքում: Եվրոպայի խորհրդին անդամակցում են 47 պետություններ, որոնցից 28-ը միաժամանակ նաև Եվրոպական միության անդամներ են: Եվրոպայի խորհրդի անդամ բոլոր պետությունները միացել են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային՝ որպես մարդու իրավունքների, ժողովրդավարական և իրավունքի գերակայության պատկանությունը նպատակադրված միջազգային համաձայնագրի: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը վերահսկում է Կոնվենցիայի իրագործումն անդամ պետություններում:

The Council of Europe is the continent's leading human rights organisation. It comprises 47 member states, 28 of which are members of the European Union. All Council of Europe member states have signed up to the European Convention on Human Rights, a treaty designed to protect human rights, democracy and the rule of law. The European Court of Human Rights oversees the implementation of the Convention in the member states.

www.coe.int

Եվրոպական միությունը ամենախիստ և հազմախիստ եզակի գործընկերություն է եվրոպական 28 ժողովրդավարական երկրների միջև: Միության նպատակն է՝ ապահովել խղճագրություն, բարեգլխեանում և ազատություն իր տարածքի 500 միլիոն բնակիչների համար, ավել բանականում են տարել ավելի արդար և ապահով աշխարհում: Այս նպատակների իրագործման նպատակով ԵՄ երկրները ստեղծել են մարմիններ, որոնք կառավարում են ԵՄ-ն և հաստատում վերջինիս օրենսդրությունը: Եվրոպական միության հիմնական կառույցներն են Եվրոպական խորհրդարանը (որն ապահովում է Եվրոպայի ժողովուրդների ներկայացուցչությունը), Եվրոպական միություն խորհուրդը (որն ապահովում է անդամ երկրների կառավարությունների ներկայացուցչությունը) և Եվրոպական հանճնաժողովը (որն իրականացնում է ԵՄ ընդհանուր բանկի պատկանությունը):

The European Union is a unique economic and political partnership between 28 democratic European countries. Its aims are peace, prosperity and freedom for its 500 million citizens—in a fairer, safer world. To make things happen, EU countries set up bodies to run the EU and adopt its legislation. The main ones are the European Parliament (representing the people of Europe), the Council of the European Union (representing national governments) and the European Commission (representing the common EU interest).

<http://europa.eu>

Partnership for Good Governance
Կործնակցության հանուն բավ կառավարման

